

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՈՇԱԿ

№ 6-7  
JUIN-JUILLET  
1930  
PARIS (France)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԴԻԾՆ

## ՆԱՅԱՆՁՅ ԵՒ ԻՐ ՊԱՏՃԱՐՆԵՐԸ

Հետզհետէ բացւում է գաղտնիքը այն ահանկի դրամայի, որ, «Համատարած կոլեկտիվացում» անան տակ, խաղացւեց թ. Հ. Միութեան բարաձակ տարածութիւնների վըրա՝ կամչատկայից մինչեւ Պետրովրադ եւ Սպիտակ ծովից մինչեւ Արաք:

Չնայած 7-8 ամիսներ են անցել ինչ միջնադարեան ճորտութիւնը, այս նորագոյն անանան տակ, վերակենդանացել է աշխարհի մի վեցերորդ մասի վրա՝ նրա արձագանքները միայն վերջին երեք ամիսներին հասան արտասահման: Որոյնեան, բոլէկիեան ցենզուրայի բարեգործ, այս ժամանակ, երբ Հանրապետութիւնը Միութեան բազմանդիրու գելացափութիւնը մրցկանար ծովի պէս փոթորկում էր «Համատարած կոլեկտիվացում» կոչւած աղէտաց՝ մենք բոլէկիեան թերթերում կա՛մ Զինաստանի ու Հնդկաստանի «Արութառական» յեղափոխութեան յերիւրանքներն էինք կարդում եւ կա՛մ բոլէկիեան մամէջ ֆրազէօլոգիայով պէճազարդած, Հաղորդագութիւններ այն մասին, թէ ի՞նչ «հանդավագինները վագում են դէպահ հառաքական անտեսութիւնները, թէ ի՞նչ հրակայական աշխատանքներ են կատարում հաւաքական անտեսութիւնները կազմակերպելու համար, թէ, հողակրծութեան մէջ այս նոր «յեղափոխութիւնը» կատարելով, բոլէկիմը մէկ ինչքա՞ն է մօտեցրել ընկերվարութեան յաղթանակին եւն եւն...»

Բայց ահա, համատարած կոլեկտիվացման այս թու ու բոհի մէջ, հարանեան ինչոք յ նետած ուռւմ ի պէս, պայթում է Ստալինի ծանօթ յօւլածը կոլեկտիվացման «քեալագիտութիւնների» եւ վայրագութիւնների դէմ, մի յօւլած, որով բոլէկիկ դիկտատորը առաջն անգամ բանում է ծայրը այն թանձը վարագոյի, որի յետեւը կատարում էր մեր գարայշանի ամենամեծ ողբերգութիւններից մէկը:

Ստալինի այս յօւլածից յետոյ, խորհրդային թերթերը, չնախարձիկ կապկու-

թեամբ, սկսեցին խարանել համատարած կոլեկտիվացման յիմարութիւնները բոլէկիեան տմարդութեամբ սրանց մեղքը բարդելով կոմունիստական կուսակցութեան տեղական կազմակերպութիւնների, գիւղական բիշխների եւ մժեղային գործիչների վրա, որոնք, իբր թէ, կուսակցութեան գծած ուղից շեղելու հետեանցով է, որ ընկել են այդ յիմարութիւնների մէջ: Մի ապշեցուցիչ անպատկառութիւնամբ, այդ թերթերը մոռացութեան էին տալիս, որ բոլէկիեան դիկտատուրայի մէջ տերեւն անգամ չի կարող տեղից շարժւել, առանց կենտրոնի հրահանգի, ուր մնաց թէ սոսրազամ կազմակերպութիւններն ու գործիչները... Եւ ի՞նչ չի չփառի բոլոց մոռացութեան տային: ո՞վ կարող էր նրանց մեղադառնքների դէմ ծպտուն հանել: ո՞վ կը համարած է իր, չարազէտ «համատարածի» իսկական պատասխանառուներին երեւան բերելու համար, մէջբերումներ անել կոմ: Կուսակցութեան կ. Կոմիտէի բանածեւերից կամ Ստալինի հրահանգներից եւ կամ նոյնիսկ խորհրդային թերթերից, որոնք, գեղ, մի քանի շաբաթ առաջ, լրձնաշուրթներուն էին կարդում համատարած կոլեկտիվացման սրարշան վերելքին...»

Ստալինի յօւլածին յաջորդեց եւ կ. Կոմիտէի նահանջը կոլեկտիվացման հակատի գրեթէ բոլոր դիրքերից: Գիւղայիններին ազատութիւն տրեց դուրս զայ հաւաքական տընտեսութիւններից, եթէ չեն ցանկանում նրանց մէջ մնալ, երկրագործական տուրքերից շատերը վերացեցին, մասնաւոր անտեսութիւնների համար պետական օժանդակութեան յայտարարութիւններ եղան, եւ, ի լրումն այս ամենի, գիւղական «կուսակներին» կամ ունեւորներին վերացարձին նրանցից յափշտակած ստացածքը — բացի մթերքներից, անասուններից եւ այլ այս կարդի ապրանքներից, որոնք արդէն լափել էին...

Այս գիւղակրոյս նահանջը կուսակցութեան հիմնական գծից, կամ սոտալինեան նախկին գիւղերից՝ անխուսափելի հարկադրանքի

նշաններ էին կրում իրենց վրա: Ամենքի համար պարզ էր, որ ինչ որ բաններ էին տեղի ունենաւ լի: Հ. Միութեան մէջ, որոնք խուճապի էին մատնել բոլեւիկներին: Բայց թէ ի՞նչ բաններ էին սրանք՝ հաստատապէս ոչ ոք շգթէր:

Շուտով, սակայն, կոմունիստական կուսակցութեան պաշտօնական հաղորդագրութիւնների եւ զեկավար անձանց զեկուցումների մէջ երեւան եկան, կարմիր զօրքի տրամադրութիւնների եւ գիւղացիական խոռվութիւնների մասին, խուլ ակնարկներ, որոնք կարող էին բանալի դառնալ նահանջի առեղծածը լուծելու համար: Եւ մինչդեռ արտասահմանեան հրապարակագիրները այս գործով էին զրագւած, վրա հասան լի: Հ. Միութեան զանազան վայրերից գաղտնի ճանապարհներով ուղարկած հաղորդագրութիւնները եւ առաջին հերթին ճայաստանից եկած նամակները, որոնք բաւականաչափ լրու են ամս խոռվութիւնների վրա:

Մեր տեղեկութիւնները դեռ եւս լրիւ չեն որովհետեւ ճայաստանի գիւղերու ու քաղաքներն, մի քանի ամսից ի վեր, այնքան են կտրած միմիանցից, որ մի վայրում տեղի ունեցած գէպերը շա՞տ մեծ դժարութեամբ են ուրիշ վայրերի սեփականութիւն դառնում: Սակայն, եւ այնպէս նրանք որոշ գաղափար են տալիս այն արհաւերքների մասին, որոնց ենթարկել են մեր երկիրն ու ժողովուրդը վերջն ամիսների ընթացքին:

Ըստ այդ հաղորդագրութիւնների, ներկայ գէպում մենք գործ ունենք ոչ թէ բոլեւիկների հերթական յիմարութիւններից մէկի չետ — յիմարութիւններ, որոնցով լին է նրանց ընկերվարական փոքրերի տասներեկուամեայ պատմութիւնը — այլ մի իսկական ոնիրի հետ, որին զո՞յ է զնացել մեր երկրի բովանդակ ազգարնակութեան 80%-ը կազմող գիւղացիութիւնը: Այս ոճիրը հետեւեալ զըրաւաններն ունի:

Համամիութեանական կոմկուսի կ. կոմիտէի հրամանով կամ, որ նոյնն է, Ստալինի կարգադրութեամբ, ձեռնարկուում է գիւղական տնտեսութիւնների կոլեկտիւացումը, ինչպէս և. Հ. Միութեան բոլոր մասերում, ոնյանք և Հայաստանում:

Սկզբուն աշխատում են համոզել գիւղացիներին, որ կամովին մանեն հաւաքական տնտեսութիւնների մէջ՝ իրենց անձով, գոյքով եւ ստացւածքով: Սակայն, երբ տեսնում են, որ մեր գիւղացիները հրաժարուում են ընդառաջ զնալ բոլեւիկեան առաջարկներին՝ իշխանութիւնը որոշում է բռնի միջոցներով խորտակել նրանց ընդգիրութիւնը:

Այս բոնի միջոցները, որոնք տարածւում են կօսկերատիներից արտաքսելու սպառնալիքից մինչեւ ամրող ստացւածքի բռնա-

դրումը, բանտը, աքսորը եւ մինչեւ անգամ գաղտնի գնդակահարութիւնները՝ կատարեալ սարսափի են մատնում գիւղացիներին:

Տեսնելով որ ճար չկայ խոյս տալու այս պատուհասից, վերջիններս շարժական գոյքը եւ մանաւանդ անասունները, որպէսզի ինչքան կարելի է փոքր միջոցներով մանեն հաւաքական տնտեսութիւնների մէջ եւ փոքր կորուտով զագաւեն այս փորձանքից: Բայց որովհետեւ ամենքն էին ուղում ծախել իրենց գոյքերն ու անասունները, իսկ զնելու համար ոչ ոք հրապարակ չէր գալիս՝ գիւղացիները գիւմում են մի տնաքանդ միջոցի: Նրանք սկսում են անխնայ վասնել եւ վիշացնել իրենց արդար քրտինքի արդիւնքը եւ, մասնաւորապէս մորթուութիւններ, որ մեր ժողովրդական տնտեսութեան հիմնական չղերեց մէկն չէ հանդեսնում, երկա՞ր տարիների համար զօսանում է...

Ահա այս ձեւով, համատարած կոլեկտիւացումը «յաղթանակում է» Հայաստանում: Յաղթանակում է հազարաւոր մարդկանց ձերբակալութեան եւ աքսորի, բազմաթիւ տնտեսութիւնների քայլայման եւ հանասնապահութիւններ, որ մեր ժողովրդական տնտեսութեան հիմնական չղերեց մէկն չէ հանդեսնում, երկա՞ր տարիների համար զօսանում է...

Համատարած կոլեկտիւացումին զուգահեռաբար, առաջ էր տարում, ինչպէս ամէն տեղ, նոյնակս եւ Հայաստանում, այսպէս կուսած, «կուլակների» կամ ունեւոր գիւղացիների ոչնչացումը: Ով ծանօթ է հայ գիւղացիների տնտեսական դրութեանը, գիտէ անշուշտ, որ համաշխարհային պատերազմից առաջ էլ, ունեւոր հայ գիւղացին եւրոպական միջակորեայից ցածր վիճակ ունէր. իսկ համաշխարհային պատերազմի եւ բոլեւիկեան բէժմի առաջ բերած քարութանդից յետոյ, երբ ժողովրդական տնտեսութեան եւ անհատական բարեկեցութեան չափանիշները առնավազն 50%-ով ընկած են՝ ունեւորի կամ «կուլակի» կարգնեն գասում մեր այն պարագային, երբ նրանց ունեցածքի մէջ շահագործած քրամինքի հետո իսկ չկայ. — բաւական է, որ նրանք օրւայ հացի կարօտչեն եւ կիսամերկ չեն չըջում: Որովհետեւ, խորհրդային կարգերում, մարդագայել ապրեն ինքնին յանցանք է բոլոր ոչ-կոմունիստների համար...

Գիւղացիական այս համեմատարար բարեկնցիկ ասարի գէմ, պաշտօնական ձեւակեր-

պութեամբ, սկզբում դասակարգային պայքար էր միայն յայտարարածած: Բայց, ինչպէս ամէն րան, այնպէս եւ այս «ռայակարգային պայքարը» բոլէւիկէն բոնապէտութեան տակ շրտով ալլասներեց եւ դարձաւ Փլիկքական ոչնչացում: Նրանց ամբողջ ունեցած-չունեցածը թալանում էին եւ կանանցով, Նրեխաններով քամու բերանը տալիս: Արգելած էր, այս բառի բուն իմաստով, ընչաղութեաներին ընդունել գիւղական կոլեկտիվների մէջ, որովհետեւ բոլշևիկներն տոյամատութիւնը դասակարգային պայքարի իմաստը դասակարգային տարրերութիւնները նշնջերու մէջ չէ եւսնում, այլ դասակարգային վրէժնենդրութեան մէջ: Խօստիւ արգելած էր, որ համապիւղացիները, եւ մինչեւ իսկ ազգականները, ապաստարան կամ մի կոտր հաց տան այս թշառոներին: Եւ սըրացաւ մարգկանց բոլոր հարցումներին, թէ նրանք ի՞նչ պէտք է լինեն կամ ո՞ւր պէտք է զննան՝ անազորոյն իշխանաւորները մի պատասխան էին տալիս: «Ինչ ուզում են լինեն, ուր ուզում են գննա»...

Այս զարհութելի բարբարութիւնը, որ թիւրքահայական տարագրութեան ոժնդակ օրերն էր յշեցնում, լրացրեց գառնութեան բաժակի վերջին կաթիլը եւ ժողովուրդը, «ոչ մի ուրիշ միջոց չգտնելով խօսք հասկացնելու իր մեծ ու պատիկ դահիներին» պէնքի դիմեց:

Ապստամբութիւնը ծայր տևեց հէօյիւք-վէդիի շրջանից, որ գերազանցօրէն թուրքերով է բնակեցած:

Հայ բոլցեկիները նախապէս որոշած էին Հայաստանի թուրք գիւղացիներին զերծ կացուցանել համատարած կոլեկտիւացումի աղէտից, որպէսզի մի աւելորդ անզամ եւս առիթ ունենալին պարծենալու, թէ, իրենց իշխանութեան տակ, թուրքը աւելի՝ բանտառը վիճակ ունեն քան հայերը: Սակայն, նրանց թալանչիական բնազդներն աւելի՝ զօրել գուրս եկան քան «Քաղաքական» նկատումները, մասնաւն, որ Հայաստանի ունեւոր թուրք գիւղացին անհամեմատ աւելի ճարպուտ է քան թէ հայ: Քեւզացին:

Բէօխւը-Վէդիցիների ապստամբութիւնը աղդանչան հանդիսացաւ այն հազարաւոր հայ փախտականների համար, որոնք, բանտի ու աքսորի տաւայտանքներին չենթարկւելու համար, լեռներն էին ապաստանել կամ թագնել գիւղերում ու քաղաքներում: Սրանք էլ, մոռացութեան տալով անցեալի թշնամութիւնները, միացան թուրքերին, եւ այսպիսով կազմմեց բաւական պատառելի մի ոյժ, որ մի շարք կոփիւերում խալատուկ պարտութեան մատնեց բոլցեկիներին:

Առաջին յաջորդութիւնների աղդեցութեամբ, ապստամբական շարժումը տարածեց դէպի Դարալազեազի, Նոր-Բայազէտի, Ղազախի, Ղարաքիլիսէ եւ Լոռիի շրջանները:

Կառավարութիւնը չվստահելով, թէ ժողովրդի ծոցից եած հայ «կարմիր» զինուորները գէնք կը բարձրացնեն իրենց թալանւած հայրերը ու եղբայրների դէմ — եւ յետազայ դէպերը ցոյց տին, որ նա իրաւունք ունէր շվաստհելու — կոմունիստներից մարտական խմբեր կազմակերպեց, եւ Զեկայի ոստիկաններին միացնելով՝ նետեց կուփ դաշտը: Սակայն, խաղաղ, հրու-հնազանդ ժողովրդի հանդէպ առիւծ կտրող այս քաջերը գրեթէ ամէն տեղ կորացամք փախուստ տին ժողովրդական զինած ուժերի առաջ:

Խուճապա: ար հայ բոլցեկիների վերջին յոյց ուսուական սէլին էր: Այդ սէլինների ուղղեցութեամբ էին նրանք Հայաստան եկել՝ իրենց լուծը հայ ժողովրդի շվնդին դնելու համար: Այդ սէլիններն էին նրանց փրկողը հայ ժողովրդի ցասումից՝ Փետրարեան ապստամբութեան օրերին: Այժմ էլ այդ սուինները միայն կարող էին հասնել հայ բոլցեկիների օրհասին:

Եւ հասան:

Ապստամբական ուժերը, գրեթէ ամբողջ Դարալազարաց բոլցեկիներից մաքրելուց յետոյ, պատրաստում էին Քեշշգենանդի վրայաձակելու՝ բոլցեկինեան այդ վերջին բունն էլ քամուն տալու համար՝ երբ յանկարծ նրանք իրենց առաջ ցցւած տեսան ուսուական կարմիր դիմուրներին:

Սրանց յաղթահարելը արդէն վեր էր ապստամբների ուժերից: Ուստի նրանք, թողների գրաւած գիւղերը, մասամբ քաշեցին բաները, մասամբ էլ ցրեցին դէպի զանազան կողմերը:

Սրանք են վերջին ամիսների իրազարձութիւնները մեր գժաբախտ երլրում, եւ այս իրազարձութիւնների աղդեցութեամբ է, որ բոլշևիկները, ինչպէս Փետրարեան ապստամբութեան յաջորդ օրը, նոյնպէս եւ այսօր, ահարեկւած նահանջում են իրենց ինելազարութիւններից:

Եւ ոչ միայն նահանջում, այլ եւ «ինքնաքնակառապատիթեան» կամ ինքնամտրակման կարգով, ծաղը ու ծանակի են ենթարկում դեռ եւս մի քանի շաբաթ առաջ այնքան ներրողւած «յաղթանակները» գիւղական տնտեսութիւնների կոլեկտիւացման «Ծակատում»: Եւ ոչ միայն ծաղը ու ծանակի ենթարկում, այլ և ձեւացնում են, թէ պատժում են այդ «յաղթանակների» հերոսներին, որպէսզի մեղմացնեն մեր գիւղական զանգւածների ցասումը, զրաւեն նրանց վստահութիւնը եւ գէթ բարոյացակ զինաթափ անեն:

Այս փաստը ինքնին բաւական է Հայաստանի բոլցին իրազարձութիւնների քաղաքական արժէքը չափելու համար: Բայց այդ իրազարձութիւնների մէջ մեզ համար իսկստ հրազանգիչ այլ փաստեր եւս կան:

# ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խօսք վերաբերում է արտասահմանեան հայ երիտասարդութիւնը մեր կուսակցական շարքերում կազմակերպելու խնդրին։ Սահմանափակում եմ նիւթսարտասահմանով, որովհետև երկրի երիտասարդութեան կազմակերպումը բացառիկ պայմանների մէջ է գտնում և առանձին կարգով պէտք է քննութեան նիւթառնայ։

Այս խնդրի հանդէպ մէր մարմիններից շատերի անհոգութիւնը խիստ մտառովէ հանգամանք ունի։ Հայ երիտասարդութիւնը յամառօրէն բախում է Դաշնակութեան շնչարձութեան ընկերը, բայց մնեք նրան ուշադրութիւն չենք դարձում, մինչև որ այս կամ այս երիտասարդը, օրինական բոլոր ձևականութիւնները պահենով, դրաւոր դիմում չկատարէ մէր շարքերի մէջ մտնելու համար։

Հանրային հետաքրքրութեան բարձունքներից գաղուց է իջել Քաջազնունիի զիրքը Դաշնակութեան անելիքի կամ շանելիքի մասին։ Սակայն, արժէ որ երիտան-երրեմն թղթատենք այդ զիրքը՝ Ձեզինի պոտվունուները իրականութեան տեսաների վրա չափելու համար։

Այսօր, մեղ զրադեցնող հարցի տեսակէտից, արժէ առանձնապէս զիրքին Քաջազնունիի արտայայտութիւնները հայ երիտասարդութեան և Դաշնակութեան փոխյարարերութեան մասին։

«Երիտասարդութիւնը, նոր սերունդը — ասում է Քաջազնունին — մեղ հետ չէ այլ ևս, ինչպէս էր 20-25 տարի առաջ՝ Թարմ, ոգևորութիւնով ու հաւատով մոժեր չեն զալիս շատացնելու մեր շարքը, փոխարիննելու յոշնածներին, ինքնավտահութիւնն ու հասար կորցրածներին։ Բնդէհասարկ՝ փախում են մզնից, լուսմ են կուսակցութիւնը», ևն։

Քը շանկանալինք իմանալ, թէ ի՞նչ կը մտածէր Քաջազնունին, եթէ այսօր զիրքի հարտարակութիւնից վեց տարի անց, գտնէր հայ երիտասարդութեան վերաբերմունքը դէպի Դաշնակութիւնը այսուղ, արտասահմանում, ուր այդ երիտասարդութիւնը ի վիճակի է, ապաս և անկաշկանդ պէկրպով, զիրք ճշուելու հանդէպ որուէ կուսակցութեան։ Կուգինք իմանալ, թէ ի՞նչ կը զգար նա, երբ տեսնէր, որ Դաշնակութեան նախաձեռնութեամբ կամ աջակցութեամբ կատարող բոլոր ձեռնարկները, զիրքէ առանց բացառութեան, իրենց շուրջն են համախմբում հայ երիտասարդներին այնպիսի բաղդանքութիւններով, որոնք մեզ յիշենում են 1900-1907 թականները Ռուսաստանում և 1908-1914 թականները Տաճկաստանում։

Այս՛, կոյքը դիրք համար ևս բոլէն տեսաների է, որ հայ երիտասարդութիւնը Դաշնակութիւնը է որոնում ամէն աել։ Այս տրամադրութեան արտայայտութիւնը մնեք տեսնում ենք ո՛չ միայն հրապարակային ժողովներում ու հաւաքոյթներում, ուր Դաշնակութեան ա-

նունից արտարեւող ամէն մի կարգախոսք խանդավառ ցոյցիրով է զիմաւորում երիտասարդութեան կողմից, այլ և այն բազմաթիւ զիմումների մէջ, որ բազմաթիւ երիտասարդներ այլ և այլ երկրներում անում են մեր մարմիններին՝ Դաշնակցութեան շարերի մէջ արձանագրելու համար։

Առարկայօրէն շատ հասկանալի է այս վերաբերութեանը։

Նրի ու սրի բովլից անցած որբերի մի սերունդ է հասունացի այսօր մեր չուրիչը, որի հոգին փոթորկած է ազգային-պատարգական տենչերով։ Այդ սերունդը իր մանուկ օրերին այնքան շատ գուշութիւնների է ենթարկել և այնքան մորմուքել, որ այլ ևս անկարող է անվերապահորէն նւիրել ընթացիկ կեանքի հրապոյրներին։ Անցեալ ծանր յուշերը թունաւորում են նրան ներկան և, մշտապէս խոռվայրոյց վիճակի մէջ պահելով նրա հոգին՝ «զործի» ցանկութիւն ստեցում նրա մէջ։ «Գործի» այս ցանկութիւնը, որ երեխայական սարիններում հոյր վրէժինդրութեան պահանջի պոտթկումներով էր հանդէս գալիս, այժմ հասունացել, դրանել է ազգային-քաղաքական մի ձգում, որի նպատակն է՝ ի գերեւ հանել հայ ժողովուրդը խպառ բնախնչելու կամ գնչուների թափթփուկ դարձնելու ծրագրները, որոնց իրականացման համար, անագորյն թշնամինները երէլ որպացրին մեր այս սերունդը, իսկ այսօր էլ մտանել են նրան աստանդական կեանքի տայտաններին։

Որբերի սերունդի կողքին այժմս հասակ է նետել արտասահմանում մի այլ սերունդ, որ վիճակակից է առաջինին, եթէ ոչ իր անցեալով, գէթ իր ներկայով։ Սա կոտորածների սարսափը չէ ապրել, չէ տեսել հայրերի ու եղբայրների յօլուած դիակները և մայրերի ու գործերի բանաբարութեան ամօթանքը, բայց որբերի հետ միանալուն զգում է սաստանդական, ստարերի շատելութեանը կամ, լաւագոյն դէպում, խոճանքառեանը ևնթակայ կեանքի թշւառութիւնը, և նրա պէս ձգում, որ դուրս գայ հեմալիօս-ի (Հայրենիքից դրկածի) անարդական վիճակից և պատհայենիք, ապաս ազդի անդամ զառնայ։

Արդ, ո՞ւր պէտք է փնտրէ հայ երիտասարդութիւնը իր այս ձգումը զործ, կեանք դարձնելու կարելիութիւնները։

Թամակավարների շրջանակո՞ւմ։ Բայց նա ի՞նչ կարող է գտնել զառամեալ հոգիների այս ժխորք մէջ, ուր ազգային բոլոր արժէժները ամէն բուէ կարող են վաճառքի հանել մի պնակ «սոսպապուրգ» համար։ Կարո՞՞յ է նորահա հայ երիտասարդութիւնը նաբաւել նրանով, որ այդ կուսակցութեան անջիք և անկարագիր զիկավարները, իրենց լվանտինեան հոգին քաջարելու համար, յամափ խօսում են ազդի և հայրենիքի մասին երբ ամենքը զիտեն, որ նրանց համար, ո՞չ ազդ և ո՞չ հայրենիք երբեք ամելի չեն նշանակում,

քան երաժշուութիւնը՝ կուշտ ճաշէն ելած ինքնարաւաւ-  
կան բուրգուայի համար:

Սզգի է հայրենիքի մասին խօսելը պարտաւորե-  
ցնուու է լուրջ զոհաբերութեան: Բայց հայ երիտասար-  
դութեան ե՞րբ տեսաւ զոհաբերութեան ոգին ումծկա-  
վարների մէջ: Ե՞րբ տեսաւ, որ Հայոց ազգի համար  
հառաջող այդ պարոններից ունէ մէկը իր կեսարը  
վտանգի ենթարկէր ազգի համար, կամ իր քսակէն նիւ-  
րաբերէր, կամ իր արքայական ոռնիկի մի մասից  
հրաժարէր՝ կարիքի և անօթութեան մէջ տապկլուող  
ազգակիցների թշւառութիւնը մեղմելու համար:

Այս օրանից սկսած, երբ Հայաստանը կորցրեց  
իր անկախութիւնը՝ ոսմակալարները, սիրազեղ սո-  
խակների պէս, Հայաստանի գովորն են երգում, նրա  
հոգերով տառապում է նրա վերաշնութեամբ ուրա-  
խանում: Բայց այսքան տարիների ընթացքին Նեղոսի  
և Մէնայի ափերին ճեմոլ այդ պարոններից ո՞ր մէկը,  
դնաց Հայաստան՝ իր շինարարական հմտութիւններն  
ու միջացները ի սպաս զնեւու նրան, կամ գոնչ աչքով  
տեսնելու և ձեռքով շշափելու թէ Հայաստան աւատ-  
ծը թէն բան է: Զէ՞ որ նրանք քաղաքական բարեյու-  
սութեան վկայականներ ունին տաշաց բոլէկիներից:  
Զէ՞ որ Քայաստանի զռները բաց են նրանց առջև...

Այս գործերից ոչ մէկը չէ տեսնում հայ երիտա-  
սարդութիւնը: Բայց նա աւելանում է կ եփուէ, որ այս-  
օր ան բոլոր հայ մարզիկ, որոնց կրծքի տակ հայ-  
կական սիրտ է բարախում և որոնց ուղեղները շխտա-  
օրէն զրաղւում են Հայութեան ճակատագրով՝ անկախ  
իրենց ընկերային դիրքից և անկախ իրենց գաղաքա-  
րականութիւնից, որ շատ յաճախ իսկական ոսմակա-  
վարականութեան դրօւմ է կրում՝ երես են գարձերի  
կուսակցութիւն խաղացող այդ խամճաճիներից, որոնք  
երէկ սուլթանները գարշապահներն էնին լիզում, այսօր  
բոլէկիների առաջ են քծնում և վաղն էլ ուրիշների  
առաջ կ սոլոսինքն — միայն թէ օրեւոյ իշխանաւորը  
օտար լինի և քաղցր եքազով նայու իրենց զոր...

Ո՞չ, ազգականի իդէքսներ նանցանող հայ երիտա-  
սարդութիւնը գործ չունի ոսմակալարների ժօտ: Եւ  
ով առիթ է ունենիլ դիտելու ուամիւլարների հանդէս-  
ներն ու հաւաքրյունները՝ նա նկատած կը լինի, ան-  
շուշտ, որ երիտասարդութիւնը բացակայում է նրանց  
մէջ, բացի «ոսկի երիտասարդութեան» մի քանի սըն-  
դուրւած զոյցերից, որոնց մէջ «որտեղ հաց՝ այնուղղ

կաց»-ի հոգերանութիւնը ժառանգարար փոխանցւած է

հայրերից, և որոնց ձգտումների այրն ու բէն սպա-  
ռում է նուազուն պարերի ու շոյալութիւնների ընձե-  
ռած վայելենքութ:

Դույց հայ բոլէկիների կուսակցութիւնը կարող  
է գործունէութեան մէխազայր զառնալ հայ երիտա-  
սարդութեան ձգտումների արտայայտութեան համար: Կար  
ժամանակ, երբ այսպիսի յոտեր կային, յոյսեր՝  
որոնք գունաւորւում էին նոնիսկ ոչ-երիտասարդ Քա-  
ղաքնունիների արածագրութիւնները: Զէ՞ որ հայ բոլ-  
էկիները՝ մեծ մասմէ զնուական ու կորովի երիտա-  
սարդներ՝ խօսում են հայ ժողովուրդը փրկելու, հայ-  
յաստանը վերակենականացնելու, հայ գաղթականու-  
թիւնը տեղաւորելու և նման գրաւէրի մասին: Սակայն,  
աւագին, աւագ՝ այսօր այդ յոյսերը անդապնա-

լիորէն խամրած են ամենալաւատես հոգիների մէջ ան-  
գամ: Այսօր մտքով կոյրերն իսկ գիտին, որ հայ բոլ-  
էկիներին կարելի է մեղադրել բարոր տեսակի մեղքե-  
րի մէջ, բացի հայրենասիրութիւնն, ազգային դաւա-  
նանքի և ժողովրդական սրտացւալութեան «մէղերից»:

Եւ ինչպէս չգիտանա՞ն: Զէ՞ որ հայ բոլէկիները,  
ամերու փակելով երկրի գուներն արտասահմանի հայու-  
թեան առջև, հրապարակօրէն յայտարարում են, թէ  
վերջինս իրենց չէ հետաքրքրում, կամ, լաւագոյն  
գէտքում, հետաքրքրում է իրեր թնդանօթային միս՝  
երրորդ ինտերնասիրոնալի դաւերը Ցունաստանում,  
Սիւրիայում, Ֆրանսայում և այլ երկրներու յաջող-  
ցնելու համար: Զէ՞ որ հայ բոլէկիների մօտ ծանր  
յանցանք է համարում խօսել Ալեքսանդրին և Վար-  
սականին չնորււած հայկական գաւառների մասին, կամ՝  
տաճէկայական փիլայէթները թուրքին թողնելու և  
գաղանձնիք որը զարձնելու անարդարութեան մասին,  
կամ՝ ժողովրդական և մարդկային աղասութեան տար-  
րական պահանջի մասին և կամ՝ մեր ազգային-մշա-  
կոյթային արդէները պահպանելու անհրաժեշտու-  
թեան մասին — զեր մի կողմ թողած անկախ հայրե-  
նիքի պահանջը, որի մասին բերան բանալու արդէն  
մահացու մեղք է ...

Հայկանալի է, ի հարկէ, որ այս «մէղքին» այն-  
քան հակամէտ նորահան հայ երիտասարդութիւնը,  
որ աղաս հայրենիք և աղաս ազգային կեանց ստեղծե-  
լու մէջ է գունում մի կողմէց՝ իր տառապանքի վրէ-  
քը, իսկ միւս կողմից՝ իր փրկութեան երաշխիքը —  
ոչ մի պատճառ չունի հայ բոլէկիների կուսակցու-  
թիւնը իր ձգտումների արտայացտէն նկատելու: Դրա  
համար էլ, չնայած այս կուսակցութեան զործակալ-  
ների բոլոր ջանքերին, չնայած նոյնիսկ աջ ու ձախ  
ուսանողական նպասափառ ձեռվ, կամ այլ ձեռքով  
շայալող կաշագներին, որոնցով Յ-կ տարի առաջ  
քաղաքական հոգերութիւն էնին կատարում կունունիս-  
տական նգելուները՝ նրանց չյաջողւեց երբեք մի քանի  
տասնեակ երիտասարդից աւելի՛ քաշէլ զէպի իրենց  
շարքերը:

Ապարդիւն անցաւ նրանց համար և այն կողմնակի  
օժանդակութիւնը, որ այս գործում փորձում էին բե-  
րել «Հայաստանի վերաշնութեան» պոռոզանը փշող-  
ները՝ յուսալով թէ կարելի է մի քանի առուների և  
շնութիւնների մասին բոլոր անկիւններից ու հրա-  
պարական ճանապարհութիւնը հայ երիտասարդու-  
թեան աղային ինքնաշխութեան վրա նրան, «Հօ-  
կերի» ճանապարհութիւնը կամ աղային ինքնաշխութեան  
աղային աղային ինքնաշխութիւնը կամ աղային ինքնա-  
շխութիւնը: Ապարդիւն անցաւ, որովհետեւ նախ՝ ոչ  
մի պոռոզանը ու ճառով չի կարելի իսկացնել բոլէկի-  
նեան անտեսական քաղաքականութեան երեսից քայ-  
լայած, մերկ ու անօթի կեանքի՝ տառապանքներին  
դատապարտուած հայ ժողովրդի աղիսիարը ճիշճերը,  
որոնք մինչև արտասահման են հասնում: Այնուհետեւ  
հայ երիտասարդութիւնը չի կարող չիմանալ, թէ ի՞նչ  
ողործելի քանակ և որակ է ներկայացնուած բոլէկինեան  
շինարարութիւնը հանգէպ այն շինարարական աշխա-  
տանքների, որոնք կատարում են լուս ու մունջ,  
առանց ուկամամային թմրկանարութեան ու փողահա-  
րութեան, աշխարհիս բոլոր անկիւններում: Եւ կեր-

ջապէս՝ այդ երիտասարդութիւնը գիտէ, որ եթէ բոլցէկի բռնակալները հայ ժողովրդի անտեսագործական ազատութիւնը կապանքների տակ չդնէին՝ նա, չնորհիր իր սաեղծագործական կարողութիւնների, այս տասը տարիների ընթացքին տասն անգամ աւելի՛ մեծ չափով չնորած կը լինէր Հայաստանը:

Այս ժողովուրդը հեռաւոր անցեալում Անին է Հայակակիրտել, մասաւոր անցեալում Թիֆլիս ստուծէլ, Իդմիրու ու Պոլիսի ծաղկեցրի, իսկ այժմ էլ Միջազգետքի անապատներն է չինացնում. ո՞ւմ են ուղում զարմացնել այն երկու տասնեւակ չէնքերով և մի քանի էլ լորդակայաններով ու առողջերով, որոնք վերջն տաերկու տարիների ընթացքին կառուցւել են Հայաստանում՝ առանց նւազադոյն չափով իսկ հակականել կարողանալու մասնաւոր մեռնարկների ու տրնտեսութիւնների փլուզումից առաջացած աւերածութիւնը...

Այս ամէնը պէտք է աշքի առաջ ունենալ՝ ըմբռնելու համար, թէ ինչո՞ւ բոլէսկիների հանդէսներն ու հաւաքոյթները միշտ դատարկ աթոռների շուրջն են կատարում, բացի այն դէմքերից, երբ առակալարները և նրանց ապագայանացած համէնարդները կարեւոր են նկատուում ներկայ գտնւել այդ հանդէսներին ու հաւաքոյթներին՝ իրենց հաւատարմութիւնը օրւայ իշխողներին ցուցադրելու կամ իրենց հակականքը դէպի մեր պէտական դրօշակը և այդ դրօշակի հետ կապած ազգային իրէալները մի աւելորդ անգամ ևս շեշտելու համար :

Համեմատաբար աւելի՛ յաջողութիւն կարող էին ունենալ հայ երիտասարդութեան մէջ ճշակեանները: Որովհետեւ նրանց մէջ կան գեռ ևս ազգային-ազատագրական յեղափոխութեան աւանդութիւններին կառչած և Հայրենասիրական տրամադրութիւններով տոգորուած մարդիկ, որոնք կարող էին դէպի իրենց գրաւել այդ տրամադրութիւնների յիշեւ գրաւարը երիտասարդներին: Սակայն, ուրբախտարար, ներքուստ պահակուած և գեկավարութիւնը կը քրցրած այս կուսակցութիւնը, տարիներից ի վեր այսպիսի քաօսի է մատնած, որ նրա մէջ՝ մտնողը անհրաժեշտարար պէտք է զլուխի կորցնէ: Խոկ ևթէ նկատի ունենանք, որ այս կուսակցութեան մի համաձար, ու ապա համական մի համաձար, «Ճշակեան» անունը շահագործելով, իւտած է այն անարդ պայքարին, որ մղում են առաջարկարներն ու բոլցերինը՝ հայ ժողովրդի ազգային իրէալները սպանելու համար՝ այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչո՞ւ հայ երիտասարդութիւնը հեռառու է մոտւմ նաև ճշակեան կուսակցութիւնը:

Մէջ անզը մոտւմ է միանի Դաշնակցութիւնը, որ ինչպէս երէկ, այնպէս և այսօր, անյողութը կանանած է հայ ժողովրդի ապաստարութեան պայքարի ճամապարհին, իրեն մի կուռ, գրանիտեայշ՝ կազմակերպութիւն, որին ոչ մի հողմ չի կարողանում իր տեղից շարժել: Դաշնակցութիւնը՝ որ աստամերով ու ճանկերով պայքարում է մեր ազգային ազատագրական իրէալները իրականացնելու և մեր ագգային արժէքները ներքին ցաւագիրների և արտաքիրների ըարքային քուսաբերելու պատրաստակամութիւնը:

արիւնը խանեց նրա արեանը, իսկ միւս մասը այսօր էլ պատրաստ է իր հանգիստը, ինչը և կենաքը զոհելու մեր հայրենիքի ազատութեան և մեր ժողովրդի փրկութեան համար:

Հասկանալի չէ, որ այս պայմաններում հայ երիտասարդութիւնը խոնուում է Դաշնակցութեան շուրջը և ամէն տեղ Դաշնակցութիւն է որոնում՝ նրա միջոցով իր սրբազն ձգումները իրականացնելու համար: Հասկանալի չէ, որ ոյսնիսկ շատ հայ երիտասարդները, որոնք կուսակցական կեանիք անխուսափելի սահմանափակումներն իրենց խառնածքն անյարիր նկատելով, մեր շարքերի մէջ չին մտնում, այնուանանային, յուղիչ պատրաստակամութեամբ, իրենց օժանդակութիւնն են հանդէս բերում ամէն անգամ, երբ Դաշնակցութեան կարգախօսով մի դոր է ցցւում հրապարակի վրա:

Այս ամէնը շատ հասկանալի է:

Անհասկանալին այն է, որ մեր մարմիններից և գիտակից ընկերներից շատերը մինչև հիմա բաւականաշափառ ու շարքը չի անդամանական ազգութիւնների մարմարներում և մարդկան գործ վրաց անդամ այդ էլ մերն են» ասելով՝ մենք ձգել ենք այս գառփուուն երիտասարդութիւնը իր ճակատագրին և միմիայն հրապարակային «հանդէսների ու ժողովների միջոցով նրանց հաղորդակից պահել մեր ձգումներին ու առաջադրութիւններին: Մինչդեռ մենք ժամանակ չպէտք է կորցնէինք այ երիտասարդների ազգային-ազատագրական և նկերային գաղափարները խորացնելու և նրա համականներու գէպի Դաշնակցութիւնը մեի տակ զնելու՝ լաւ իմանալով, որ մակերեսային զաղափարները և ճշակերպւած համականներն առաջադրութիւններին ու առաջադրութիւններին, որոնց հոգիների մէջ ուրաւածեած են մեր ազգային իրէալները և այդ իրէալների համար զոհաբերելու պատրաստակամութիւնը:

Ներկայիս մեր հերթական խնդիրը այս թերին լրացնելով պէտք է լինի:

Դաշնակցութեան քառասահմանակը առաջիկայ աշնանց արդինաւաէտ կերպով տօնելու համար, ոչ մի ձեռնարկ աւելի՛ արժէքաւոր չի կարող նկատել, քան այն, որ այդ քառասահմանաւաէկին մենք մեր շարքերի մէջ առած լինենք բոլոր հայ երիտասարդներին, որոնց հոգիների մէջ ուրաւածեած են մեր ազգային իրէալները և այդ իրէալների համար զոհաբերելու պատրաստակամութիւնը:

Խօսն այսուել զաշնակցական շարքայինների թիւը մեքենայորէն մեծացնելու մասն չէ, ի հարկէ: Դա համեմատաբար շատ դիրին դորձ է, ինչպէս ցոյց տակն վերջին տարածեած նեգիպատուում, Բուլգարիայում, Բուլմանիայում և Անդրկանքի Ամերիկայում, ուր երիտասարդները շատ հոսր քանակ են ներկայացնուում: Դժւարինը և արժէքաւորը մեր շարքերին ընդունեմի երիտասարդներին կուսակցականորէն մարզեն է, և դրա վրա պէտք է կենորոնացած լինի մեր ուշագրութիւնը:

Պէտք է նկատի ունենալ, որ արտասահմանեան այսօրայ պայմաններում մէկին իսկական զաշնակցական պարմանքներ այլ ևս այնպէս զիւրին չէ, ինչպէս որ էր երէկ, երկիր մէջ: Այսուեղ զաշնակցականը իր կու-

սակագական աշխատանքն սկսում էր, կարելի է ասել, չէնց առաջին օրից դործօն պայքարի թու ու որհի մէջ նետելով, յաճախ հրի ու սրի դէմ կաղնելով: Սրա համար էլ երկրում զաշնակական արձանադրամը շատ կարճ ժամանակամիջոցում թրծւում էր կուսակցական գիտակիմի: և պարտաճանաչութեան մէջ: Այսուղ, արտասահմանում յեղափոխական գործի այս նպաստառը պայմանները չկան և, զրա համար, կրինակի և եռակի աշխատանք է հարկաւոր Դաշնակցութեան շարքերը գիմո՞ր երիտասարդներին կուսակցական գիտակցութեան թերթու — նրա գաղաքական մտածողութիւնը յստակացնելու և կարգապահութեան ու պարտաճանաչութեան ողին նրա մէջ մշակելու համար:

Պէտք է նկատի ունենալ նաև, որ ներկայի դաշնականից աւելի՝ մեծ հասունութիւն է պահանջում քաղաքական և կարգակերպական հարցերի մէջ, քան թէ առաջներում: Փոխւած են մեր կեանքի և պայքարի պայմանները, կուսակցութեան առջն նոր, շատ բարդ խնդիրներ են ծառացել, կուսակցական դաշնաւածներից աւելի՝ դործօն մտանակցութիւն է պահանջում այդ խնդիրները լուծելին, և այս ամենի համար կըրկնակի անհրաժեշտ է շարքային դաշնակցականի քաղաքական մտածողութիւնը և կարգակերպական րժրոնող թիւները խնամքով մշակել:

Աւելորդ է ասել, որ այս գործը կուսակցական ժողովների մէջ չէ միայն, որ պէտք է կատարւի, այլ և դուրսը, անհատական զրոյցներով ու լուսարանութիւններով: Սրա համար էլ, այսուղ կուսակցական մար-

միններից զատ և նրանցից էլ աւելի՛ անհատ ընկերներ պէտք է երեր կատարեն:

Եւ պէտք է որ, առաջիկայ ամիսների ընթացքին, իւրաքանչիւր ձեռնշաս դաշնակցական իր բաժիններու քը այս կարեւոր խնդրի լուծմանը: Պէտք է, որ իւրաքանչիւր գիտակից ընկեր իր պարտքը համարի մինչև Դաշնակցութեան քառասնամեակի տօնախմբութիւնները, առուազն երկու-երեք երիտասարդ պատրաստելու համար:

Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ վերակենացնելով մեր հոգիներում մեր անձնազունակութեան կատակերի յիշասակը և խանդավառութեամբ վերապրելով նրանց հոյակապ յեղափոխական գործերը՝ մենք աւելի լաւ միջոց չենք կարող գտնել, այդ խանդավառութիւնը գործ գարձնելու համար, քան այն, որ պատրաստենք թարմ և կորովի երիտասարդների մի սերունդ՝ ընդունակ արժանաւորապէս իր կրծքին սեղմելու Դաշնակցութեան կարմիք դրոշակը, որի շուքը տակ երկու փառապան սերունդներ, արհամարհանքով անցներակ կեանքի լույսը հրապոյըների ու վայելքների կողքից, հայ ժողովրդի Սզառութեան զոհի սեղանը բարձրացնա:

Եւ աս կը լինի ամենադեկցիկը, և ամենաարժէ-քաւորը այն նէկներից, որ մենք, ապրող դաշնակցականներս, պարտաւոր ենք երկիւզանութեամբ ներկայացնել մեր մեծ տօնատիրոջը — Հ. Յ. Դաշնակցութեանը:

Ա. ԶԱՄԱԼԵԱՆ

## ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՐԵԲ ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆՈՅՑՈՎ

Գ.

Ինչպէս տեսանք, Հայ ժողովուրդը Թիւրքիոյ մէջ պատակտած համայնք մնան էր, և կը յամաէր մնալ այդ վիճակին մէջ, հակառակ Դաշնակցութեան գերադաշտութիւն:

Պատերազմի հէնց առաջին օրերուն, բարոյապէս կազմալոյց և Ֆիզիքապէս անպատրաստ արևմտահայութեան շարումի մասնեցաւ: — «Ի՞նչ պիտի ըլլանէ: Խնչ պիտի լինենք:» Մանը Հարցումներ, որնք ցւեցան բորբը դէմ և մնացին անպատրաստան: Մեծածանութեան համար պարզ էր թէ վիճ պատիք ըլլանք: Ապա պարզ էր, որք հետեւ թիւրքերը լաւ կը ճանաչնայինք. հետեւարար գիտէինք թէ Հայ ժողովուրդը ջարդի ենթակայ պիտի ըլլայ: Բայց այդ սոսկաի ջարդի մեծութիւնը հազի թէ կը հասցնէնք 1895-96-ին աեղի ունեցած շշեցնող գէպերու ծաւալին. ու

անգօգութեամբ կը կըլինք» այդ դաժան հաւանականութեան մասին մտածելով: Ապրիլեան եղունը կը մնար երեակայութեան ահմաններէն անդին:

Իսկ թէ ի՞նչ պիտի ընէլինք» կը մնար անորոշ, և խոռվիչ հարց մը յեղափոխական ասրբերու համար. մինչդեռ հակայեղափոխական եւ հակադաշնակցական զանգւածի համար նոյն խոռվիչ հարցը զիւութեամբ իր պատասխանը կը գտնէր: Որովհետեւ մնանք ընելիք բան մը չընկին և երբեք պատրաստած չին բան մը լուներու: Թէկ կը գդային զոյւութեան ծանրութիւնը, սակայն, թոյու ու անկազմակերպ ամբոխի մը հոգիսանութեամբ, անմնատու եղան ճակասապրապաշտ հաղանդութեան մը, և ձեւակերպեցին իրենց պատուիմանը: «Սպասենք, տեսնենք Աստած ինչ կադրիմի»:

Սպասենք, տեսնենք... դիւրին պատասխան,

քաղցր թոյն մը, որ սիրով կը բացաւեցաւ թոյլ ու անկարագութիւններու կողմէ՝ գլխաւորութեամբ այն բռչոր ազգային հաստատութիւններու, որոնք յեղափոխութեան հետ առցնչութիւն շտնէին և, սակայն, ժողովուրդին կը խօսէին յանուան ազգին: Եւ որքո՞ւն մէ էր կամալուծումը, այնքա՞ն աւելի համոզիչ էր այս սորտական պատասխանի պատճեամբութիւնը: — «Ավասե՞նք, ազգը անշուշտ բան մը գիտչ...»: Մինչ զեն ազգային հաւաքախն կամ մը գոյութիւն չուներ: Ազգը բաժնւած էր երկու անհարիր հատւածներու, երկու ճակատի՝ դաշնակցական և հակադաշնական:

Ազգի իրական և կազմակերպւած ուժը Դաշնակցության էր, որ կրցած էր իրարու զգթայլ բռու հաճանազներն ու զաւաները, մինչև յտին գիւղը ստեղծված էր միատեսքի մտածողութիւն և կարգապահ Հութիւն և պարտադիր իր կազմակերպւած չարքեալ ունի համար համար էաւածութիւն համար:

Հակապանակացական ազգ-հաստածը շատ խայտար բղիս էր: Խամկավարը, հնչակեանը, յետադիմականը կղերը, Պատրիարքարանը, առաջնորդարաններն ու անոնց կից հաստատութիւնները (ընդհանրապէս հակա դաշնակցական ու չեղոք խառնուրդով մը) միասին առած՝ այս հաստածը կը ճարմանաւրէին, որ միակա ու բարզակի դիմագիծ ունէր, երբ խնդիրը հաշնակ ցութիւնը հարւածելու շուրջ բանանք: Բայց այդ «կար քերոր» ճակատը դիմուելուն պէս, բազմադիմանի ամ բրոխ մը կը գտանար, իրարամէրք և իրարագւա, թոյ ու անկամ, զորկ նորիսկ ինքնանապահութեա տարրական բնագոյն:

Հայութիւնը այս ճեղքած հասակովը ներկայաց  
ցաւ համաշխարհային պատերազմին։ Ու ցեղին մեծա-  
մասնութիւնը, ամբոխային տրամադրանութեամբ, հակ-  
ւցաւ թոյլ ու անկամ հատուածին կողմբ, յուսացր  
թէ՝ «Ազգը բան մը զիսէտ, սպասենք...»

Այս վանգաւոր համակերպութեան դէմ, Թաշինակցութեան վճռական խօսքը կուշանար. կամ, անոնինքնապաշտպանութեան թելադրանքը նւազուն արձագանք մը կը զանէր բազմութեան մէջ: Խոհեմութիւնն ու շատ բարակը մանող իմաստութիւնը ծանր կը կըսէ ոչին ուղեղներու մէջ: Ժամանակի ու զէպքերու թելադրանքը կը չափէին բարեկազօրէն, պատասխանաւոթեան կատարեալ զիտակցութեամբ: Մակար Հ. Յ. Դաշնակցութիւնը այնքան դիրութեամբ չի կրնար խոսափի Հայութեան առջև դրած հարցեց Պատութիւնը, ճակատագրական վայրիկաններուն կուգայ և կը կինայ այն ուժին առնէն, որ կըչւած ազգի մը ճակատագրի պատասխանաւոթեան իր ու սերուն վրա առնելու, անողոքաբար անտեսելով՝ յարակին պատ առնենո՞:

Հ. Յ. Ց. Յաշնակցութիւնը միակ քաղաքական ուժը էր, որուն առջև հայոց պատմութեան ուղղը պիտի չըքբէ: Մնացած հոսանքներն ու հաստատութիւնները իրերու բերամով, կը զառնային անարդէք ու անտեսելի՝ հայ-թքական յարաբերութեան և հայոց Փեղականաց առաջնական առաջնական տեսակետներն:

«**Φίνεις** αγιθηφή ρύπων»—θεοί μνημηρεύει τηρητικού αντικαθίσταντος θεού της πατέρας του.

պայթումէն ամեջապէս յետոյ և 2) Ապրիլի եան եղեռնի առաջին շաբաթներուն։ Քննենք այս երկու պերփող ները առանձին առանձին, որովհետեւ, եթէ առաջին պերփողին տատանուել արգանձնալիք էր՝ դրութեան անողոքութեան պատճառապեսնեթեամբ, երկորորդ պերփողն այս արդարագումը չունեցւ։

Պատերազմը պայմիցաւ այն ատեն երբ Հ. Յ. Դաշնակցութեան 8րդ Ընդէ. ժողովը տեղի կունենար էր գրում մէջ: Պատերազմը առաջին շաբաթէն իսկ դարձաւ համաշխարհային, ու կողմէրը ճշտեցան Թիւրքիան տակաւին կուի չէր մտած, բայց բոլորի համար ալ պարզ էր, որ ան պիտի կենար Գերմանիո, Կողքը, ընդդէմ համաձայնական պիտութիւններու, Հետեւաբար՝ ընդդէմ Ի՞ռուսաստանի: Թթվական կառավարական կուսակցութիւնը, — Իթթիւստը, հակառակ մեր եւած նախորդ նացելերուն և հակառակ այն իրողութեան, որ իթթիւստա-դայնակցական համաձայնութիւնը երեք տարիէ ի վեր չեղեալ համարակած էր նախամտաւած ծրագրութիւններով և առավարիութիւններով իլիազօր ներկայացուցիչները կը դրէցը էրգորում, ծանր երկինտրանքի մը առջև զնելով ամբողջ հայ ժողովուրդ ու:

թիւրք կառավարութիւնն ու իթթիհատը շատ լազ  
գիտէն թէ Հայոց ազգային միւս հաստատութիւննե  
րէն և խաւերէն վասանք չէր սպառնար իրենց . ու անոնք  
կը դիմէին Հայութեան ուժի լսկական գեկավարին :

Н<sup>о</sup> 12 կը պահանջին թիւրքերը:  
Թիւրքերը չբաւականանալով հաւատարմութեան և  
պարտազիր զինուրութեան պարտաւորութիւններով  
որ ընդունած էին և կը գործադրեէին ամբողջ Հայու-  
թեան կողմէ, կառաջարկէին Դաշնակցութեան (այս-  
ինք ամբողջ Հայութեան), որ ան կազմակերպէ ապօ-  
տամրութիւններ Արարատեան Հայաստանի մէջ, գոր-  
ծէ ուսական բանակի կռնակէն. բացի օրինական գին-  
ուրներէ, կամաւորակն գունտներ կազմակերպէ և  
մասնակցի կովկասեան ճակատի արշաւանքին: Մէջ  
խօսեսկ, Թիւրքերը կուգէին, որ մենք ոչ միայն ցմա-  
ծենք Թիւրքոյութէջ ամփոփած Հայութեան ինքնա-  
պաշտպանութեան մասին, այլ այնպիսի քայլեր առ-  
նենք, որ ամբողջ կովկասահայութիւնն ալ ենթարկւ  
ուսական պուռին:

Այս բոլորի փոխարէն Թիւրքերը կը խոստանայի ինքնապարութիւն չնորդել Արագատէան Հայաստանին... Օմաննեան պետութեան գերիշխանութեան ներքոյ; Վերջին հաւով, Թիւրքերու տած խոստումներ եթէ կրականանային, կրականանային լիովին համարքական ծրագրի առաջին մասը:

Այս ամբողջ վտանգները Էթի մէկ կողմ թողննեն  
և ուշագիր քննութեան ենթարկենք Թիւրքիոյ առաջարկները, պիտի տեսնենք, որ հայերը, որքան արանիմաց ըրլային, այսուհանդերձ պիտի գիտակցիի թէ, Թիւրքիան այն ուժը չէր. Հանդիսանար, որ կընանան ծրագիր մը գլուխ բերել լինզկէմ ուռական մեռաժին: Խոկ հայութիւնն իր ամբողջ զանգածով Խուսափոյ դէմ հանին քաջարական նման ծրագրի մը հիմա վրա, ծիծաղլիք յաւակնութիւն մը պիտի ըլլրա: Մինչ զես Դաշնակցութեան ջրմանական տառակորսութիւնը կուտանած է առաջարկած անձնեւ մասնակիութիւնը Հայութիւն չաւ գոստուուն ահճեւի մասնակիութիւնը:

մը առջև կը գտնեէք և մենք չինք կրնար մեր աչքերը փակէլ թիւրք տարրի ձգտումները չտեսնելու համար։

Հ. Յ. Դաշնակցութիւնը կը պատասխանէր իթթիւատին և հետաքարար՝ թիւրքիոյ։ Այս մենք դէմ ենք պատերազմին (տուրք մը մեր ընկերվարական դաւանանքին), իսկ երէ պատերազմի պայքի, հայ ժողովուրդը կը մենայ չեզոք։ Հայ ժողովուրդը բաժնաւած է երկու հաստածներու։ Առաջանա հաստածը իր փուռքապուրեան։ Տասկահայութիւնը կը պարապիր զի՞ւրազուրեան։ Տասկահայութիւնը, ինքը պարապիր զի՞ւրազուրեան և կը կատարէ իր պարուականութիւնը հանուն պետութեան։ Խամար կիականական խմբեր և կօժանդակէ թիւրք կատարաւուրեան, երէ այդ խումբերն ու գենք մասնակարարութիւնը ընդունելու պարագային, կուսակցութիւնը կը յուսար չօսապիւթ զինւած ուժ մը ունենալ հայկական նահանգներու մէջ, ինքնապաշտպանութեան համար։

Դաշնակցութեան պատասխանը անվճռական պատասխան մըն էր։ Դաշնակցութիւնը հայութեան ընդհանուր և անորոշ մտանութեան հետ քովընտիք կը քայլէր։ Անվճռականութիւնը հակադաշնակցական մըթնուրաէն և քաղաքականապէս տհաս ամրոխէն կամաց կամաց փոխանցաւած էր կուսակցութեան խաւերուն մէջ։ Խունութիւնը և հայ պայքի ընդհանուրութեան հետ միասին ընթանուր մտահոգութիւնը յեղափառական կազմակերպութեան թիւնը կը կապէին։ Հ հակառակ իր ջանքերուն՝ տեղուած կացութեան ելք մը շոնեւու, կը մնար պարզ ինքնապաշտպանութեան (այն աւանդներին վայրէենանին) միջոցն կառչած։ Ինչ որ կը նահանգէ, սպասում եր մոտենայ սպասենք, տեսնենք-ին։

Սակայն, այդ պատասխանը թիւրքերուն համար վճռական նշանակութիւնը ունէր։ Թիւրքերը մեկնեցան երգուումն մէկ համոզումով, որ Դաշնակցութեան պատասխանը ծխտանութիւնը էր։ և որ՝ երբ մենք բացարածկորչն իրենց հետը չենք, հասաւ ուրեմն մուսաւատի հետին ենք։ Աստիք յետոյ կը մնար պարզ քաղաքական կեղծ յարաբերութիւն մը, որով գիտակցուն ինքիններու կը խարէինք, սպասելով աւելի լաւ օրերու գալուն։

Հայութեան բոլոր հաստածներն ալ իրենց հոգին խորքին մէջ թիւրքիոյ գէմ էին և հակած համաձայն նական պետութիւններու կողմը։ Թիւրքը այս բանը յատակ կը տեսնէր, իսկ հայը կը կարծէր թէ այդ իր հոգու գաղտնիքն է։ Սպասենք, չեղող կը մնանք։ Պատերազմը, սակայն, միջն ճանապարհ չըր ճանչնար, — կամ այս, կամ այս կողմը։

Թիւրքերն արդդէ 1912-ի և 1913-ի կոտորած ծրագիրներու զինւած էին։ Բաւեանեան պատերազմին յետոյ տեղի ունեցած գէաքերու բացայայտորչն թիւրքը ընկ գէմ լարած էին, և աննոնց կը սպասէին արագիսի պատեհութեան մը։ Համաշխարհային պատերազմի ընձնած պատեհութիւնը թիւրքերու կողմէ ճարպով կը փոխուէր։ Հայերն այդ բանը հասկացան թիւրքի պայտիք դայ՝ այդ գայրի հայութիւնը պատպանէլու։ Իսկ երը պատերազմին գանձնական վանչ վան,

մէջ մտաւ, «քայլք ոտից, գոյնք երեսաց» գալիք ահաւոր օրերը ցոյց կուտային։

Առաջին պէտրոնին մէջ նկատենք 1914ի վեց ամիսները, յուլիսէն մինչև գեկտէմբեր ժամանակաշրջանը, շուրջը նայելու, կլուելու, ներքին և արտաքին դէպէտը բով քովի զնիւլու, եղակացութեան մը յանդեռու համար։ Արդ, պարզ էր բոլորի համար թիւրքան վրտանգոր։ Պարզ էր, որ ճակատագրական վայրէեանին, հայութիւնը պիտի մնար մինչակ։ և ոչ մէկ արտաքին մէջամտութիւն չպիտի կրնար կասեցնել թիւրքական ջարդարար ձեռքը, քանի որ բոլորն ալ պատերազմի մէջ էին և իրենց ամբողջ ուժը թափած էին ճակատներու վրա։ Յայտնի էր նաև այն, որ Կովկասի մէջ կամաւորական գոնդէր կազմւած էին հայերէ և կը մասնակցէն ուսւական յառաջնապացման։ (Կամաւորական շարժումը պատմութեան առջև արդարանալի շարժում մըն է, բնական արդիւնքը տարայց հայ հասարակական կենաքին։ Բայց սէտք է չելչուն նաև այն ճամարատութիւնը, թէ այդ շարժումը գոյութիւնը ունենալիք կամ ոչ, թիւրքերը չպիտի հարաւորէին իրենց ծրագրէն, որու հիմնական նպատակն էր լուծենի հայկական հարցը։ Հայ ժողովուրդը ջարդելով։

Հայութիւնը, վեց ամսւայ ընթացքին, այս բոլորին ծանօթ էր։ Իրեն ու երեսոյթները գասաւորած էին յասակօրէն ամսէս, որ թիւրքն ու հայը թշնամի ճակատներու վրայ կայսած էին, փաստորէն իրարու դէմ կը պատարազմէին, տեղ մը գէնուրվ, իսկ ընդհանութեան մէջ՝ թիւրքը ուղիղ ճանապարհով իր գերշանական նպատակին կը մօտենար և պատերազմը շարունակելով հանգերձ, տենդազին կերպով իր ներքին ուժերու կը պատրաստէ։ Այս ուզգութեամբ, բարձարթի թիւրքեր և թիւրտեր իրենց բարեկամ հայերուն յայտնութիւնները բրած և գգուչացուցած են։

Բայց ի՞նչ կընէր հայը, այս բոլոր պարզութիւններէն յետոյ։ Հայութեան ճեղքւածքը, կը խեղացնէր իրկու հատուածներն ալ։ Հակադաշնակցական և պահպանողական հայութիւնը կը կէկէր հնազանդութեան տակ, ապագ փրկելու գործը վստահութիւնը կոնդիսանալու այդ խոհէմ քաղաքականութեան։ Միայն հոգի ծածուկ ծալքերու մէջ կը սնուցանէր անճար մարգու զգացում մը այն նապազոն հաւանականութեան մասին, թէ կարող է պատահէլ, որ թիւրքական հարածանքերուն գերազանցապէս զոհ երթան յեղափոխականները և զանազան ըմբոստ ըջանեները, իսկ իրենց ինայիւ, որպէս խոհէմ և հնազանդ տարրերու։

Հայ Եղագիրխական Դաշնակցութիւնը կը քաշէր ինքնապաշտպանութեան պարզութիւնը բայց գէմ լայնապահութեան մը համար էր։ Իրաքանչլուր գայր առանձին առանձին, ե՛ր գանձակը սուկրուն հասնի, ե՛ր խուժանը հայկական թատերը մտնէ, երը, մէկ խօսքով, կոտորած սկսէն, այն ատեն միայն իշաշակցութիւնը հրապարակ պիտի դայ՝ այդ գայրի հայութիւնը պատպանէլու։ Պոլսէն մինչև վան, Դաշ-

Նակութեան զեկավար ընկերները անընդհատ կը հրահանգին և կը կրկնին թէ վտանգի առջն ենք, ամէն աշխատանք ըրէք ինքնապաշտպանութեան համար, բայց վերջին ծալր գուղութիւն և բուհներութիւն ունեցէք, որպէսզի հայ ժողովուրդի գլուխէն այս փոթորիկն անցնի: Զոհւեցէ՛ք եթէ պէտք է, բայց պատճառ մի զառնաք որեւ գրգռութեան, որ կրնայ Հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը խնդրոյ առարկայ դարձնէլ: Խոչ ձեռով ալ մօտնանք Հ. Յ. Դաշնակցութեան ցուցահանած ար Հոգերանութեան, որքան ալ զայն ուղենք բացատրել տեսալ անը պայմաններու թելարանովով, կամ պատասխանատութեան դժուարութեամբ, հիմնավանը և էականը կը մնայ այս, որ մեր կուսակցութիւնը մեծ չափով ազդած էր հակադաշնական և հակայեղափոխական լարձակումներէն, վարակւած էր պահպանուական թոյնով: Գոյութեան տարագով այդ անդոյն ընդհանրութեան կողքը կը կենար, ամբողջ ազդի հետ միասին պատասխանատութիւնը բաժնելու մտահոգութեամբ, երբ պատասխանատու որևէ խմբակ կամ հաստատութիւն անոնց մէջ գոյութիւն չունի:

Հայութիւնը մէկ մարդու պէս, կարգապահ ու աշխատակութեան և տեսէն քայլելու հոգեբանութիւնը որդեգրած չէր տակաւին: Այդ պատճառով Դաշնակցութիւնը կը մնար հաւաքանութեան հետ և կը գուշանար հապարակ աւալ իր մենասէրի (յեղափոխական գործի մէջ) գործակով և ինքնապաշտպանութեան գործը գարձնել համահայրական նախապահ բառութիւնը, ծրագրւած ու նախայրձակ, վտանգը կանխող:

Այս պայմաններու մէջ նեազանդութիւնը, անիեւ ինքնառուացում մըն էր, ձեռնաու թշնամուն՝ զիւրութեամբ ջարդն իրականացնելու: Խոկ կրաւորական ինքնապահանութիւնը ինքնախարիկութիւն մըն էր, վերջն շնչնը չիւնելու չնանք մը, որ իր նաստակին չէր կրնաց ծառայել: Ինքնապահանութիւնը թիւքինյ մէջ, այդ ծամանակաշրջանին կարելի էր միայն ապրատաբրւեամբ, վեռական ու խիզախ, Վանէն մինչև Կիլիխ:

Ապատամբութիւնը միակ կարելոր օրակարգն էր, որ, սակայն, կը մնար պատասխանատու մարդոց մրտքին մէջ ծրագրած, առանց գրական պատասխանի մը: Ապատամբութեան Հոգերանութիւնը գոյութիւն չունէր. այսպիսի ծրագրի մը նախապէս գծւած չէր: Հայութիւնը ու Հ. Յ. Դաշնակցութիւնը այսպիսի ձեռնարկ մը գլուխ հաներու համար պատարաստած չին: Հոգեկան երկութիւնը տիրական կը մնար, երկութիւննեամբ ազդն մէջ:

Փակնենք այս պատճնը շրջանը և պահ մը արդարացնենք այս տասանումներն այն պատճառարակութեամբ թէ՝ ծանր ու բարդ զրութիւնը բաւարար կերպով պարզ չէր հայութեան համար: Անցնենք երկուրդ և վնասական ըրջանին, ուր գէտպէրն աւելի քան դահավաքի մէջ ընթացան, և երկոյթներն իրենց մերկութեամբ պարտեցին Հայ ժողովուրդին առջն՝ «Ք՞նչ պիտի ընենք»-ի հարցական նշանը մէծցնելով մեր Հայրենիք:

Ապրիլեան ճգնաժամի երկրորդ և վճռական շրջա-

նը կը սկսէր 1915 Յունիսին: Մինչեւ Ապրիլի սկիզբը դէպէերը զասաւորւած էին բացայալորդէն համոզիլու հայ ժողովուրդի որոր խաւերը համառարած կոսորածի մը վտանգի մասին: Որովհետեւ անցած երեք ամիսներու ընթացքին, երկրի զրեթէ բոլոր ճանապարհներուն վրա խմբովին կոսորւած էին բազմաթիւ հայ բանարներ, առանց պահանձնելու և տեսական կազմական կամ անունով, ձեռնարկած էին հաւաքան աշքի ինկած դէմքերը, գլխաւորար զիւրուական ուժերը, որոնք այս կամ այն պատճառով զօրակոչ էնթարկւած չէին: Պոլսէն մինչև Վահ Հայ ժողովուրդի ամէն տեսակ զիւրականները բունած էին ընդհանուր մտաշուրթիւնէ մը, որ իրենց կուցար ամէն կողմէն հանոնց տեղեկութիւններէն: Բոլորն ալ կը խստովանէին, որ անորոք կոտորածի մը ուրականը կը սաւառնէր հայութեան հրիբդնին վրա, և թէ տեղի ունեցած գէպէերը թրքական ջարգի մը անվարան նշաններն էին: Այս ընդհանուր լարւածութեան մէջ, ամէն հաստատութիւն և ամէն աչքի ինկած անհատ կը սպասէր իր գուռը բախող վտանգին:

Ու այս ամբողջ ժամանակաշրջանին «Ք՞նչ պիտի ընենք» հարցումը միակ նիւթն էր ինորդպակցութիւններու, որոնք վերջ չունէին, և ամէնէն վատը՝ պատասխան մը չունէին: Ժողովուրդը գլուխիր կախած, ականջն ամէնէն փոքրիկ շշուկին՝ ճամբար ցոյց աւողի մը ճայինին կը սպասէր: Անորոշ լուսթիւնը միիթարանը կը նկատէր, կարծելով թէ «Ազգն անշուշտ բան մը գիտէ»:

Հայոց Պատրիարքարանը, առաջնորդարաններն ու ազգային զանազան հաստատութիւններու վարիչները կը լոէին: Խոկ երբ ստիպէին խօսել, կը բելարյէին ենթարկի և սպասել:

Դաշնակցութիւնը գուրսու, միւս հոսանքները աղդային գործերով մնաւ չին գրագիր: Հոս այլոս պէտք չկայ հակադաշնական որակիլ զանոնք, որովհետեւ հայ համբարյան կենուքը մեռած էր: Կար մէկ այրող հարց՝ «Հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան հարցը: Խոկ այդ ինդրի մէջ՝ հակադաշնականները մերկաւախանական անփառապահանութեան էին, և տեսակարար պատասխան մը տամու մասին ալ չին մտածեր: Սակայն, հակադաշնական մտահութիւնը փոխանցւած էր ազգային հաստատութիւններու, ուր յիշեալ հակադաշնակցականները ներկայ էին, այս անզամ որսէս անհատ, խոկ հաւաքական կազմակերպութիւնը օդր ցնդած էր: Այդ մուայնութիւնը, հաւառարմ իր անցեալին, որ մենք բերցինին նախորդ էցրում մէջ, բնականարար, ապահ իհարաբէր յեղափախական գործեակին, գէտէն, նայինկ ինքնապահանութեան մտածումն: Խոչ որ կը մնար որպէս հզրակացութիւնի պարզ էր: Ենթարկել անմատին: Տւ խօսէր ուղղիլով Դաշնակցութիւնը համար այս ոյժ ունենալու մասին մտածած էին, ապա զիստուն նոր փորձանմ մը չիրէկ: Մենք ոյժ չունինք, (որպէս թէ ատկէ առաջ ոյժ ունենալու մասին մտածած էին), շղողորբութեամբ, կաշառով, դիւնազնութեամբ թիրէս փոքրիկէն ազատիք... Հ. Յ. Դաշնակցութիւնը կը մնար հրապարակի վրա: Մինչև այդ թւականը, մենք տեսանք թէ ինչ

ջանքեր թափւեցան պայման հաւաքականութենքն զուրս վտարելու զայն: Բայց այդ գերազոյն պատանդի օրերուն ան միանկ էր, ու միակն էր, որ աղքի բորոք մասնիկներն իրարու շրթայող կազմակերպութիւնը կը հանդիսանար: միակն էր, որուն պիտի ինչին վտանգի առաջին հարածները: միակն էր, որ բորոքարած՝ մտածէր գիմարաբառ զալիք վտանգը: Բայց Դաշնակցութիւնը իր միակուրքան հետ չխաչուցաւ: Այս միացաւ ամրող հայութեան, ամենորդ համակերպով բացմութեան, և սահմանափակեց ինքնանապատճանութիւնը մը՝ ամրող հայուղով բարողվ, ինքնանապատճանութիւնը մը՝ ամրող հայուցին հետ միասին: Ու այս քեր ացէն անոր համար, որ «փորձանք մը չըրի հայութեան զլիւթե»:

**Հակառակ այս բորոքին,** զանգեւածը ինքնանապատճանութիւնը դրւեցաւ երկնտրանքի առջև: Դաշնակցութիւնը դրւեցաւ երկնտրանքի առջև: Կամ միանկ հրապարակ գույի իր կազմակերպւած զանգեւածով ու պարզել կուրի զրօշակը, կամ միանալ ընդհանուրին և համակերպել: Հ. Յ. Դաշնակցութիւնը մինչև ճնշաժամի պայթումը տատանեցաւ այդ մրկնտրանքին առջև, միշտ երրորդ հաւանականութեան մը յորով, — միանանապահակասի յորով: Ի ոուր և անտեղի սպասում:

**Հ. Յ. Դաշնակցութեան մէջ այնքան մեծ էր հայութեան Փիդիքական գոյութեան պահպանման մտահոգութիւնը, և խոհեմութեան զդացումը այնքան տիրական, որ բոլոր պատասխանատու անհանուրը, Պոլսէն մինչև Վան՝ զիտանլով հանդերձ իրենց աննձապէս սպասոնացոյ մասու վտանգը, կը նախընտրէին մարտիրոսութեան, միայն թէ Հայ ժողովուրդը կը նախընտրէին զանութեան բաժանութեան բաժանութեան բաժանութեան մուրիքը և ուրիշ զեկաբար ընկերներու գրութիւններու յոյց կուտան աննաց մտահոգութիւններու ծանրութիւնը: Անոնք գիտեն թէ իրենք պիտի մենանին, զիտեն նաև, որ Հայ ժողովուրդը պիտի ննթարկի սրածութեան, բայց վերջին վայրկաններն կաղապակեն, գրեթէ կը խոդըն բորոք ընկերներէն, որ ըլլան զգոյշ ու խոհեմ, ու եթէ պէտք է՝ դուռւել, որպէսզի Հայ ժողովուրդը նւազագոյն վնասով դուրս դայ Ապրիլիեան ճնշաժամէն:**

**Ապրիլի առաջին օրերուն,** ճնշաժամը իր գագաթին կը հասնի, և գանակը՝ Հայ ժողովուրդի ոսկորին: Թրքական ծրագիրը, որ խիստ մեծ վարպետութեամբ և բազմակողմանի նախատեսութիւններով զծւած էր, զորժագրութեան զրւեցաւ, առաջնու ցանցը լարերով Վասպուրականի և Տարօնի շրջաններուն չուրջ, որիցն ամենէն վտանգաւոր, յեղափոխական կերպներու: Առաջին քայլը եղաւ բարեկամական հրաւորով, մէջ օրույր ընթացքին, ձեռք ձգել յեղափոխական զեղագրները և հետզետէ բանու հաւաքել բոլոր անոնք, որ կրնային թելաբարական հրաւորով անուղղ լարերով Վասպուրականի և Տարօնի շրջաններուն չուրջ, որիցն ամենէն վտանգաւոր, յեղափոխական կերպներու: Առաջին քայլը եղաւ բարեկամական հրաւորով, մէջ օրույր ընթացքին, ձեռք ձգել յեղափոխական զեղագրները և հետզետէ բանու հաւաքել բոլոր անոնք, որ կրնային թելաբարական հրաւորով անուղղ լարերով Վասպուրականի և Տարօնի շրջաններուն չուրջ, որիցն ամենէն վտանգաւոր, յեղափոխական կերպներու:

կուտայ թէ՝ վանդի գիտակցութեամբ բնդունած է Զէկուէթի հրաւորը:

Քանի մը ժամերու ընթացքին «խոհեմութիւնն» ու «անիոնիւնը» իրար կը կազմակերպի: Վաժմեան և իշխանը, խիստ կարևոր դեկավարներ, անապարհներու վրա կը կոտորւէին, իսկ Արամը, միւս ընկերներն ու ժողովուրդը մէկ վայրկեն կը հայւուէին: 1896-ի գէպիքուր վերջիւում... Փրկութիւնը դիմագրութեան մէջ է: Պատմական անցեալր, յեղափոխական փորձառութիւնը, վայրկեանի թելաբարանքը միացած, արդէն ինքնապաշտպանութեան բերդը պատրաստ էր:

**Նոյնը Մուշ-Սասուն և Շատափ:** Յեղափոխական աւանդութեան չնորդչւ, Դաշնակցութեան զեկավարները կը բարձրան իրել և կը բոնին նախիկն Փէտայական ճանապարհը: Բայց վարը, քաղաքին մէջ, հայոց առաջնորդ երեւներներ, անկուսական մտաւորականները, ինչո՞ւ չէ, նոյնիսկ կարգ մը խոհեմ զաշնակցականներ կը նորուինին կառավարութեան հրամանը: Համակերպակի և սպասել:

Վասպուրականէն և Տարօնէն զատ, մնացած բոլոր վայրերուն մէջ, կառավարութիւնը մէկ քանի օրւան ընթացքին կրցաւ բանտերու մէջ հաւաքել յեղափոխական գործիչները, մտաւորականները, և «ազգային երեւելիներ»-ը (այս զորինն ատկ մտան բոլոր հսանքներու պատկանող կամ չեղոք անւան ասպաւինողները), և անմիջապէս ճամար յանեց անորդ ուղղութեամբ: Վախճանը ծանօթ է:

Ազգիթան ճնշաժամը պայթած էր: Հասած էր ուրենին այն վերջին վայրկեանը, որ բոլորին պիտի համոզիր թէ գանակը ինած է ոսկորին: Ճգնաժամի այս ժողովուրդը մէջ վարպետներու, ընթանելու գիւղերու մէջ առաջանական ալ Հայ ժողովուրդը բոլոր աչքի ինկած մարդիկ, վերջին անդամն ըլլալով, իրարու հետ ժողովի նստեցան: Գրեթէ բոլոր վայրերու եղենապատումը իր աչք անցնէ, կը տեսնէք, որ առաջնորդականներու, զամանականներու, ընդունելու և ունենութիւններու ուժուածութեան և անդամութեան մէջ աեզ ինքնապաշտպանութեան և դիմադրութեան առաջարկը բերած էն, որուն միացած են ոչ-դաշնակցական յեղափոխական անհամաներն ալ: Խոկ Հայ պահպանողական և համակերպազոլ թիւ, առաջնորդներու, կղերականութեան, ազգային ժողովներու, ումկավարներու, չեղոքներու և ունենութիւններու ուժուածութեան մաժարան:

